ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱԿ/3-4/4045-11 15.06.2011թ.

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

«Հարկ վճարողների պաշտպանություն» Հ/Կ
նախագահ պրն Փ.Թադևոսյանին

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով Ձեր 24.05.2011թ. (07.06.2011թ. N5199-11) N004 գրության վերաբերյալ իրազեկման կարգով տեղեկացվում է.

Գրությամբ բարձրացված հարցը կանոնակարգված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես նշված օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի նախավերջին պարբերության համաձայն «եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է *առանձնացված կետերով բաժանված պայմաններով, և այդ կետերն իրարից առանձնացված չեն ստորակետով կամ «և» կամ «ու» կամ «կամ» շաղկապով*, այդ նորմի կիրառման համար բավարար է պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե այլ բան չի բխում տվյալ նորմի բովանդակությունից»:

Քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի բաղկացուցիչ մաս կազմող Հավելված 1-ի 8.1-րդ կետի բովանդակությունից այլ բան չի բխում, ուստի նշված կետով սահմանված պայմաններից որևէ մեկի առկայությունը բավարար է այդ նորմի կիրառման համար:

Ա.Ալավերդյան

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Կատ. Անուղղակի հարկերի բաժին
Հեռ. 594-652